

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлист. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունւում է ամեն լիւրով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱՎՈՐԻԻՆ

Գործերի վիճակը մեր մէջ. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ. Պանդիտական հասկանքները մէկը, Նամակ Բաթումից. Նամակ Բագուց. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ. Գաղափարների նամակը «Daily News» լրագրին. Անգլիական բանտերի գործադուլը. Նամակ Աւստրիայից. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ — ՀԵՌԱՎԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Տպագրութիւններ.

ԳՐՈՂՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՄԵՐ ՄԵՋ

Պարիզի միջազգային գրական կոնգրեսի ժամանակ յարուցվեց, ի միջի այլոց, և հետեւեալ հարցը. ինչ էր վերջին տասն տարվայ ընթացքում ամեն ազգերի գրողները թէ նիւթական և թէ բարոյական վիճակը: Այդ հարցին մենք բոլորս, օտարազգի գրականութեան ներկայացուցիչներս, մեր կարողութեան չափ պատասխանեցինք կարճ և ամփոփ զեկուցումներով: Իրուսահայոց գրողների նիւթական և բարոյական վիճակի մասին, այդ վերջին տասն տարվայ ընթացքում, ուրիշ ի՞նչ կարելի էր պատասխանել, եթէ ոչ որ մինչև վերջին ժամանակները հայ գրողը երբեք չէր կարող ապրել իր գրչի վաստակով և հեղինակները, մեզանում, գրելով ազգասիրական գագաթները և իրանց անձը նուիրելով ազգային գրականութեան գործին, կամայականաբար պէտք է մի որ և է մասնագիտութիւն, պարագայունք որոնէին և գրտնէին, որպէս զի իրանց կեանքը ապահովէին, քանի որ գրականութեամբ ապրել չէին կարող: Կամ մեր գրողները պէտք է զիմէին մի որ և է հարուստ հովանաւորին, խնդրելով, աղաչելով նրան, որ իրանց գրուածքը իր հաշով հրատարակէ: Մի-միայն այդ վերջին տասն տարին սկսում է նշմարել մեզանում մի յայտնի, թէև ան-

նշան բարեփոխում հայ գրողների կեանքի այն գրողի, կամ մտաւոր գործիչի գործունէութեան քսան և հինգ ամեայ յօրեմէջ: Կարողացողներ, զիրք առնողներ և լեանք տօնելու և այդ առիթով գրամական պարբերական հրատարակութիւնների բաժանորդների թիւը հետզհետեւ աւելացել է, այնպէս որ զիրք յօրինողը կարող է արդէն ծախել իր գիրքը, կարող է արդէն այսպէս թէ այնպէս ապրել իր գրական գործունէութեան վաստակով, լրագրները կարող են արդէն զոյգութիւն ունենալ առանց որ և է նիւթական կողմնակի օժանդակութեան, լոկ բաժանորդների օգնութեամբ, այնպէս որ երիտասարդ գրողների մի յայտնի, թէև աննշան թիւ, կարողանում են ապրել իրանց գրական աշխատանքով, ինչպէս առաջ կարողանում էին միմյանի վարձակաւորութեամբ ապրել: Նորերում վախճանված Բաֆֆի պէս մի գրող, կարողացաւ իր կեանքի վերջին տասն տարվայ ընթացքում ապրել իր գրչի վաստակով: Վերջապէս Թիֆլիսում վերջին տարիներս հինգից քաջաբանաբար ապրելու կամ թարգմանական ընկերութիւնը արդէն մեր մէջ ձգտում է ցոյց տալիս կարողութեան չափ նիւթական օգնութիւն հասցնել գրողներին և թարգմանիչներին՝ զնելով նրանց ձեռագիրները և տպագրելով այդ ձեռագիրները ընկերութեան հաշուով:...

Կա է այն առաջադիմութիւնը, որ մենք արել ենք վերջին տասն կամ տասն և հինգ տարվայ ընթացքում: Կրտսեր պէտք է արդեօք բաւականանա՞նք, թէ պէտք է ջանալք դարձեալ որ և է առաջադիմական քայլեր անել, պէտք է ջանալք դարձեալ բարեփոխել մեր գրողների թէ նիւթական և թէ բարոյական դրութիւնը: Տարի չէ անցնում, որ մենք չը լսէինք, թէ այս ինչ հայ գրող նիւթական կարողութեան ունի, այն ինչ գրող վախճանվել է առանց որ և է նիւթական միջոցներ իր ընտանիքին թողնելու, և այլև: Փորձեր են լինում հասարակութեան մէջ այս ու-

այն գրողի, կամ մտաւոր գործիչի գործունէութեան քսան և հինգ ամեայ յօրեմէջ: Կարողացողներ, զիրք առնողներ և լեանք տօնելու և այդ առիթով գրամական պարբերական հրատարակութիւնների բաժանորդների թիւը հետզհետեւ աւելացել է, այնպէս որ զիրք յօրինողը կարող է արդէն ծախել իր գիրքը, կարող է արդէն այսպէս թէ այնպէս ապրել իր գրական գործունէութեան վաստակով, լրագրները կարող են արդէն զոյգութիւն ունենալ առանց որ և է նիւթական կողմնակի օժանդակութեան, լոկ բաժանորդների օգնութեամբ, այնպէս որ երիտասարդ գրողների մի յայտնի, թէև աննշան թիւ, կարողանում են ապրել իրանց գրական աշխատանքով, ինչպէս առաջ կարողանում էին միմյանի վարձակաւորութեամբ ապրել: Նորերում վախճանված Բաֆֆի պէս մի գրող, կարողացաւ իր կեանքի վերջին տասն տարվայ ընթացքում ապրել իր գրչի վաստակով: Վերջապէս Թիֆլիսում վերջին տարիներս հինգից քաջաբանաբար ապրելու կամ թարգմանական ընկերութիւնը արդէն մեր մէջ ձգտում է ցոյց տալիս կարողութեան չափ նիւթական օգնութիւն հասցնել գրողներին և թարգմանիչներին՝ զնելով նրանց ձեռագիրները և տպագրելով այդ ձեռագիրները ընկերութեան հաշուով:...

Բայց ցաւալին այն է, որ այդ բոլոր ջանքերը առանձնացած, իրար մէջ ոչինչ պատճառական կապ, ոչինչ համեմատելութիւն չունեցող երեւոյթներ են:...

Ժամանակ չէ՞ արդեօք լուրջ կերպով մտածել մեր մտաւոր գործիչների համար, ինչպէս են գրողներ, վարժագետներ, գերասաններ և այլն, մի խնայողական արկղ, մի օժանդակիչ ֆոնդ հիմնելու:...

Եթէ տասն տարուց յետոյ դարձեալ մի տեղ կը գումարվի գրական միջազգային կոնգրես և այդ կոնգրեսին դարձեալ պատիւ կունենայ ներկայ գտնվելու մի հայ գրող, — ահ ի՞նչ պէտք է պատասխանել, եթէ նորից կառաջարկվի այն հարցը թէ ի՞նչ առաջադիմութիւն է եղել, ի՞նչ բարեփոխում է տեղի ունեցել հայ գրողի վիճակի մէջ: Մի՞թէ պէտք է պատասխանել, որ դրութիւնը չէ փոխվել, նոյնն է մնացել, ինչ որ էր տասն տարի առաջ, այսինքն 1889 թին:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՊԱՆԴԻՏՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԻ ՄԵՋ

Պանդիտութեան ամենամեծ սակար հետեւեալներէն մէկն է, որը տարաբաղաբար հետզհետեւ աւելի է աչքի ընկնում նոյն իսկ յետ ընկած գիւղական հասարակութիւնների մէջ, անմիտ պճնասիրութիւն է Գայտի է, որ ներկայումս մեր գիւղական հասարակութիւններում տեսական դրութիւնը անսխալաբար է, մասնա-

ւանդ այնպիսի անկիւններում, որտեղ գիւղացին, վատ ճանապարհներ չնորոյ և միջեր սպառող բազմամարդ կենտրոնի բացակայութեան պատճառով չէ կարող արտահանել իր արդիւնաբերութեան, չտանք աւելորդ, այլ նոյն իսկ իր բողազից կորածի մի մասն անգամ: Հողային արդիւնաբերութիւնը հետզհետեւ աւելի ընկնում է, մասնաւորապէս շատ անգամ բնութեան աղէտաբեր պատահարները՝ կարկուտը, հեղեղը, երաշտը, և այլն, աւելի են նպաստում այդ անկմանը: Եւ այդ դեռ բաւական չէ. ահա քայքայիչ պճնասիրութիւնն էլ միւս կողմից տարածվելով, առաւել կոյր նորաստեղծներ մէջ, բոլորովին անեղանդի դրութեան է հասցնում գիւղացու՝ առանց այն էլ նեղ կացութիւնը:

Յիրաւի, դա մի ախտ է, որով շատերը նոյն իսկ գիտակցաբար վարակվում են: Սակայն որտեղից, որի շնորհով մտադ գործից այդ քայքայիչ ախտը հնար էր գիւղական հասարակութիւնների մէջ: Ներկայ գիւղական սերունդը, որի մեծամասնութիւնը կարելի է ասել, իր կեանքի մեծ մասը անց է կացրել և անց է կացնում պանդիտութեան մէջ, ով դեռ օրովս տանջանքներով ու միջոցներով, ձեռք բերելով մի փոքրիկ գումար և վերադառնալով այդտեղի, տանում է իր հետ ոչ թէ այնպիսի բաներ, որոնք նրա ընտանիքի կենսական համեստ պահանջներին լիութիւն կարող են տալ, այլ այնպիսի իրեղէններ, որոնք գիւղացու համար աւելորդ, բայց գրաւիչ են, աչք չլացնող են: Այդ թշուառականները, առանց երկար մտածելու հետեւեալի մասին, կուրծքն հետում են միմեանց և նրանցից իւրաքանչիւրը աշխատում է այնպէս շեղ ու փարկում հագցնել իր ընտանիքի, մասնաւորապէս քնքոյր սեւու անդամներին, որ ամբողջ գիւղի մէջ միակ գրաւիչը կարողանան լինել: Դա մի նրանց բերանով ստած, որ ամենի աչքը իրանց վրա լինի: Ցաւալին այն է, որ այդ քայքայող ախտը, որը գիւղացու տնտեսապէս անկման պատճառ դարձող երեւոյթներից մէկն է ներկայումս, հետզհետեւ մի-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՊԱՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՍՏԱՐԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Իմ ծանօթ իրաւաբանի կրտսերական, ինքնաշնորհ հայեցող ֆրանսիացիների և ֆրանսիայի պակասութիւնների վերաբերմամբ՝ բացառական երեւոյթ չէ կազմում ժամանակակից ֆրանսիացիների մէջ: Ոչ թէ միայն հասարակութեան մէջ, բայց և գրականութեան ու լուրջ ամսագիրների մէջ կը հանդիպէք դուք այս րօպէին անկնայ ընտանեկան, մտքաւոր ուղղութեան: Ֆրանսիայի կազմակերպութեան, ֆրանսիական հասարակական կեանքի ու հաստատութիւնների, ֆրանսիացիների ընտանեկան վերաբերմամբ ֆրանսիայի հասարակաց կարծիքի մէջ սկսում է նշմարվել ընտանեկան ուղի, բողոքող ուղղութիւն, նոյն իսկ ֆրանսիական այլ և այլ պակասութիւնների դէմ: Մասամբ այդ ուղղութիւնը նկատվում է մամուլի, այսինքն լրագրութեան մէջ, սակայն շատ թոյլ կերպով: Մամուլի մասին ես յետոյ կը խօսեմ, իսկ այժմ վերադառնում եմ ֆրանսիայի հասարակաց կարծիքի այժմեան տրամադրութեան:

Թէ հասարակութեան և թէ գրականութեան մէջ սկսում են լսվել ձայներ ֆրանսիայի թէ քաղաքական, թէ մտաւոր և թէ հասարակական խիստ կենտրոնականութեան դէմ: Ֆրանսիան, — Պարիզ է, և Պարիզից դուրս իսկապէս կեանք չը կայ ֆրանսիական կառավարչական կազմակերպութիւնը հիմնված է խիստ կենտրոնականութեան սկզբունքի վրա, չը կայ ֆրանսիայում, օ-

րինակ Շվեյցարիայի պէս, համայնական և կանտոնական ինքնավարութիւն: Այդ բաւական չէ. ֆրանսիայի հասարակական կեանքը, իր բոլոր լաւ թէ վատ երեւոյթներով, ֆրանսիայի հասարակական բոլոր առաջադէմ հաստատութիւնները, նշանաւոր ընկերակցութիւնները, բարեգործական, արդիւնագործական հաստատութիւնների մեծ մասը՝ կենտրոնացած են Պարիզում: Մենք հիանում ենք, օրինակ, «Bon Marché», կամ «Louvre» առդին մագաղաններում ծառայողների ընկերակցութեամբ, — բայց այդ տեսակ ընկերակցութիւնները գոյութիւն ունեն միմյանի Պարիզում: «Bon Marché» մագաղաններում, օրինակ, երկու սեւու 6,000 գործակալատարները կազմել են իրանց միջ մի ընդարձակ ընկերութիւն, ունեն իրանց համար փոխատու և խնայողական արկղ և այլն: Այդ ընկերութեանը կտակել են մագաղանների հիմնողները, Բուսիօ ամուսինները, մի քանի միլիոն ֆրանկի գումար: Ես տեսայ ցուցահանդիսի այն բաժնուում, որտեղ հանգէս էին զրկված «Bon Marché» մագաղանների ապրանքները: Բուսիօ ամուսինների կիսաբաժանները, ծաղիկներով պսակված... Ո՛րք են այդ տեսակ հրէշաւոր ընկերակցութիւնները ֆրանսիայի գաւառական քաղաքներում:...

Պարիզը իսկապէս կրնում է ամբողջ ֆրանսիայի ոչ թէ միայն քաղաքական և հասարակական կեանքը, բայց և նոյն իսկ մտաւոր կեանքը: Միայն Պարիզի ուսումնական ընկերութիւնները նշանակութիւն ունեն, միայն Պարիզի համալսարանը, Պարիզի մամուլը հեղինակութիւն ունի: Գաւառական ոչ մամուլը, ոչ ուսումնական ընկերութիւնները, ոչ թատրոնը, ոչ համալսարանները, ոչ դպրոցները, — նշանակութիւն չունեն: Մի գրող, մի հեղինակ, որքան հանձնարել էր զիրք, երբեք չի համարձակվել իր հեղինակու-

թիւնը գաւառական մի քաղաքում հրատարակելու: Գիրքը որ և է նշանակութիւն կունենայ միմյանի այն դէպքում, երբ Պարիզում լոյս կը տեսնի, իսկ գաւառում ամենաբարեկից գրողները հրատարակել — կը նշանակէ դատապարտել հեղինակութիւնը հաստատ մահվան: Ոչ մի աւուստագէտ, ոչ մի արտիստ, ոչ մի նկարիչ, ոչ մի երաժիշտ, ոչ մի դերասան, ինչքան էլ հանձնարել լինէին, — չեն կարող գոյութիւն ունենալ, էլ չեն ասում հռչակվել, եթէ չը դուրս գան գաւառական միջոցաւոր ու չանցնեն Պարիզի ամեն բան սրբաքննող, ամեն բան հաշկող հասարակաց կարծիքի և կրիտիկայի բաղնիք: Գաւառական մտաւոր կեանքը այն աստիճան խեղդված է, որ նոյն իսկ քիչ թէ շատ օրինաւոր տպարան չէ գտնի ֆրանսիայի գաւառական քաղաքում, որպէս զի ձեր գիրքը հրատարակէ: Կա գուցէ անհաւատալի է, բայց այսպէս է:

Սէն գետի շրջանակի վրա մեղ տրված ճաշկերպի ժամանակ ֆրանսիացի յայտնի գիտնականներից և գործիքից մէկը ինձ հետ ծանօթանալով, նստեց իմ կողքին, շոգեկան նստարաններէն մինի վրա, և սկսեց երկար ու բարակ զանգատել ֆրանսիայի այժմեան դրութեան և վիճակի մասին:

«Գուրջ կարծում էք, ասում էր նա ինձ, որ ամեն բան ֆրանսիայում այնպէս լաւ է, այնպէս փայլուն է, ինչպէս արտաքուստ է երեւում: Այո, մենք ունենք հրաշալի էլիֆէնտ աշտարակ, ունենք ֆրանսիայի հանձնար յաղթող է հանդիսացել մեր նացած ազգերի արդիւնագործութիւնների վրա, — բայց ինչն ֆրանսիան քաղաքականապէս թոյլ է, վարչական կողմից վատ է կառավարված: Այժմ կառավարութիւնը այնքան է բաղձաբեր ընկերակցութիւն, պաշտօնեաների թիւը, որ կարե-

լի է ասել թէ ֆրանսիայի կէտը միւս կէսի հաշուով է ապրում: Կառավարութիւնը հետզհետեւ ձեռք է գցում երկրի այն բոլոր արդիւնագործութիւնները, որոնք փոքր ի չափէ չափաւ են և այդ իր կառավարչական ֆաթրիկները, գործարանները կառավարելու համար, նա հարկադրված է օրից օր բազմացնել ծառայողների թիւը: Մեր ֆինանսները անկարող դրութեան մէջ են և Աստուած գիտէ թէ ո՞ր եղբ գնում և ինչպիսի վերջնայն ներկայ գրամական ճգնաժամը:...

Բայց մասնաւոր հետաքրքիր էր այն խօսակցութիւնը, որ ես պատիւ ունեցայ լսել մի նշանաւոր և փորձված գետական մարդուց, նրա հետ ունեցած տեսակցութեան ժամանակ:

«Ֆրանսիան, ի հարկէ, միշտ իրելալիտ է եղել, ասում էր ինձ այդ պատկառելի մարդը, բայց նա այժմ թոյլ է քաղաքականապէս, թոյլ է և ֆինանսական կողմից: Ինչն ֆրանսիան հարուստ է, բայց մեր կառավարութիւնը մինչև այժմ անգործ եղաւ երկրի ֆինանսները կարգի բերելու Գուրջ ինքնիր իշխանով անցած ֆրանսիա գալու ժամանակ և երկի ինքները համոզվեցաւ, որ Ֆրանսիայի սահմանները բաց են, մերկացված են թշնամու առջև: Երբ ֆրանսիան զօրեղ էր, նա միշտ մտածում էր և ուրիշ աղողութիւնների ազատութեան մասին, իսկ այժմ ֆրանսիան, թոյլ, առանձնացած լինելով, բացի իր մասին, ոչ ոքի մասին չէ կարող մտածել, ոչ ոքի մասին չէ կարող հողալ: Եւ նա մտածողութեան միակ առարկան էլ իշխան-Լոթարինգիայի վերադարձնելն է: Եւ ամբողջ Եւրոպան էլ երկպառակված դրութեան մէջ է, այնպէս որ ֆրանսիան ոչ ոքի հետ հաստատ դաշն կապել չէ կարող: Մեր բնական դաշնակիցները քաղաքակրթութեամբ մեղ հաւասար ազգերն են, բայց մենք ինքներս արհամարհե-

սովորական, մինչև իսկ անհրաժեշտ բան է դառնում գիւղերում: Բանը այնտեղն է հասել, որ նոյն գիւղացին, իր որդու կրթութեան համար մեծ դժուարութիւններով ու տրտունջներով մի քանի րուբլիներ է վճարում, իսկ այս կամ այն թանգազին շորեղէնի համար, թէկուզ իր ուժիցն էլ բարձր լինի առնելը, նա անտրտունջ, մինչև իսկ կամովին, վճարում է մեծ գումար:

Ով փոքր ի շատէ ծանօթ է պանդուխտների կեանքի հետ, անշուշտ կը վկայէ, որ նրանց մէջ գտնվում են շատերը, որոնք երկար տարիներ մնալով պանդուխտութեան մէջ, թէև աւելի նեղ ու անաշուղ պայմաններով չըջապատված քան գիւղերում, այնուամենայնիւ չեն վտանահանում վերադառնալ հայրենիք, որովհետև ծանօթ լինելով գիւղացիների սովորութեանը, հաւատացած են, որ առանց «դարդարանքների» տուն վերադառնալով՝ ամբողջ գիւղի մէջ մի հեզական խոսակցութեան և վիրաւորիչ բամբասանքների առարկայ կը դառնան... Իսկ այդ բանը աւելի քան սպանիչ է մանաւանդ ինքնասէրների համար: Հետաքրքրողը շատ անգամ քաղաք դնացող գիւղացիներէն հետեւելով կարող է լսել, չէ՛ մեռնիմ էլ տուն չեմ գնալ, մինչև որ այսքան գումար չը դրսեւմ, որ կարողանամ «այսինչներ» նման վերադառնալ տուն, այսինքն այնպիսիներ, որոնք իրանց ունեցած մի տասը րուբլիները գաւառում անտեղի ու թանգազին իրեղէնների հետ փողոտներով վերադարձել են հայրենիք: Եւ յիշատի, վայ է լինում այն մէկին, մանաւանդ եթէ նշանակութիւն է տալիս այնպիսի բաներին, որը կամ դատարկ զրգանով և կամ մի համեստ գումարով, բայց ոչ փարթամ ու թանգազին իրեղէններով է վերադառնում: Այդպիսի դէպքում ծնողներն անգամ մի տեսակ արամաբանքով ու դժգոհութեամբ են վերաբերվում դէպի այդ պիսի, ուր մնաց թէ կողմնակի անձնաւորութիւնները, առաւելագոյն կանայք, որոնք զանազան անտեղի ու անհիմն բամբասանքներ յորինելով բերանից-բերան են մանածում ամբողջ գիւղում: Գա սովորական երևոյթ է այժմ մեր գիւղերում:

Եւ այդ անմխիթար երեւոյթը, որը գիւղացու տնտեսական անկմանը աւելի է զարկ տալի, ինչ կարելի է համարել, եթէ ոչ պանդուխտութեան ամենամիտակար հետեւանքներից մէկը:

Գ.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՅՑ

Օգոստոսի 20-ին

Ինչպէս կ'ովկասի ամեն մի վաճառական քա-

ցինք Անգլիայի դաշնադրութիւնը... Այդ սրտալը գործնքին Գամբետտա և նրա հետևորդները. միայն թիէր, մեր դարի ամենամեծ պետական մարդը կանցից մէկը, լաւ էր ըմբռնել Անգլիայի հետ դաշն կապելու օգտաւէտութիւնը: Մենք թողնեցինք Եգիպտոսը անգլիացիներին, փոխանակ մեր ձեռքից բաց չը թողնելու, Անգլիայի հետ միասին, այդ երկրի տիրապետութիւնը: Յրանս սիան բոլոր եւրոպական երկրներից ամենից շատ երախտիք ունի Եգիպտոսի վրա. մենք ենք առաջին անգամ, Նապոլէոն I-ի ժամանակ, նըւաճել այդ երկիրը, մենք ենք առաջին անգամ եւրոպական զաղթականութիւն հաստատել Եգիպտոսում, Փրանսիացի զինանկաւն Շամպուիոն է եղել, որը առաջին անգամ կարողացաւ կարգաւ եգիպտական երօզի ֆինսեր ստված արձանագրութիւնները, որով մի նոր լույս զցեց Եգիպտոսի անցնող պատմութեան վրա, մի և նոյն ժամանակ ահապոյն ծառայութիւն մատուցանելով և համաշխարհային գիտութեան, վերջապէս Փրանսիական հանձարին, Փրանսիական կապիտալիստիկ և մեր հանձարեղ լքուցիւն է պարտական Եգիպտոսը, որ ունի այժմ Սուէզի ջրանցքը. և այդ բոլորը անելուց յետոյ մենք ինքներս հեռանում ենք երկրից, չարտում ենք Եգիպտոսը, միւս ամառաբար յանձնելով երկիրը Անգլիայի ձեռքը և մեր ցանած սերմերի պտուղները ինքներս չը վայելելով, ուրիշին ենք զիջանում մեր արինը քրտինքով վատակածը վայելելու... Վերջապէս մեր բնական դաշնակիցը կարող էր լինել և նոյն իսկ Գերմանիան, չը նայելով որ մենք այժմ թշնամաբար ենք վերաբերվում դէպի Գերմանիան՝ Էլզաս-Լոթարինգիայի դժբաղդ հարցի պատճառով... Բայց Փրանսիական կառավարութեան ձեռքում հաստատ զօրութիւններ կան, որոնցից պարզ երևում է թէ իշխան Բիսմարկ, Թիէրից

դաք, այնպէս և Բաթլմը, իր մագնիսական գործիքներով Հայաստանի ամեն անկիւնից հրապուրել է բազմաթիւ հայեր. ամի քանի հազար մշակ, հարիւրի չափ վաճառական, այդքան արհեստաւոր, այդքան էլ գործակատարներ:

Հայ գիւղացին, թողնելով իր տուն ու տեղը, եկել է Բաթլմ փող աշխատելու, իրան պահելու և ընտանիքին օգնութիւն հասցնելու նպատակով, բայց այդ նրան չէ աշխատում Նա օրական աշխատում է մի րուբլ ամենաշատը, ապրում է խոնավ բնակարանում իր ուժից վարձով, ուտելիքը թանգ է, չոր լուսնայուն փող է տալիս, աւել փողով խում, քէֆ է առնում, հարբում... վարակվում դժնապաւն ախտերով, ծերանում, փչանում և վերադառնում է գիւղ...:

Վաճառականներից մի քանի գործարանատէրեր կան, որոնցից շատերը ծուռ ու ծուռ ճանապարհներով Հայաստանը աղանք են: Հայ գործարանները իրանց կարգապահութեամբ բոլորովին տարբերվում են օտար գործարաններից: Հայերի մօտ գործակատարները աւելի քիչ փող են ստանում, հայերի գործարաններում շատ գործութիւններ են պատահում. բանտները զրկվում են, տանջվում են իրանց կառավարից, նրանք յաճախ ստիպված են կաշառել կառավարչին: Գործարանատէրերից միւր օրվայ մէջ 12 ժամ ֆիդիկապէս գործող բանտներին ամսական 25 րուբլ է վճարում. իր գործարանում արտադրած ապրանքը իր բանտերին նոյն գնով է տալիս, ինչ գնով նոյն ապրանքը վաճառվում է ուրիշներին մօտ, որոնք իրանից են գնել: Պատահում է որ գործարանում բանտը բանտի կտրում է իր մատը, քրտացնում է իր աչքը, այդ դէպքում գործարանատէրը էլ ուզում նրկթական օգնութիւն հասցնել իր բանտերին բժշկվելու համար. եթէ անում է, շատ չինչ կերպով, մեծ աղաչանքներից յետոյ: Միւս վաճառականների մի մասը մանուֆակտուրային առեորով է պարագայում: Միւսները գինեւաճառներ, հիւրանոցներ պահողներ, հացահատիկների առեորով պարագայներ են: Որովհետև առեւելք յայտնի է, որ դրանք խաբում են, գինու և արաղի հետ ջուր են խառնում, վատ ցորենը, բրինձը, քիչիւրը և այլն լաւ տեղ վաճառում, իրար օտի առակ քանդում... դրանք ամենքին վաղուց յայտնի բաներ են: Ներկայ և անցիակալ այդ կարգին պատկանող վաճառականների մէջ տարբերութիւնը այն է, որ սրանք հագնվում են եւրոպական ձևով, չարունակ խոսում են ռուսերէն, ի հարկէ, բուսական տանջելով այդ խեղճ լեզուն:

Արհեստաւորները մեծ մասամբ դարբաղցիներ

յետոյ եւրոպական այդ ամենաբնեւի պետական մարդը, երբէք չէր ուզում խել մեզանց Էլզաս-Լոթարինգիան, այլ այդ նուաճման վրա պիղեց Պրուսիայի զինուորական կառավարութիւնը և յաղթող հանդիսացաւ Ֆրանսիան իրանից խլած երկրները վերադարձնելու համար ոչ զքի օգնութեան մէջ պէտք չունի. նա կամ պէտք է զէնքի ուժով իրան յետ դարձնի կորցրած նահանգները, կամ նորից պայմանաւորվելով Գերմանիայի հետ, երբ գերմանական զինուորական կառավարութեան ուժով կը նսեմանայ և նա իր ձեռքում այլ ևս կառավարութեան զեկը չի պահի, նորից խոշոր գումար վճարելով, իրան յետ դարձնի Էլզաս-Լոթարինգիան: Եւ դուք գիտե՛ք որ դեռ նորերումս իշխան Բիսմարկ նորից կրկնեց գերմանական պարլամենտում, որ ինքն ընդդէմ էր Ֆրանսիայից Էլզաս-Լոթարինգիայի խլելուն... Սակայն յարմար դէպքում Գերմանիայի հետ պայմանաւորվելու համար հարկաւոր է մի բան, այն է որ Գերմանիան իմանայ թէ ում հետ է պայմանաւորվում, համոզված լինի թէ պայմանաւորվում է մի հաստատուն կառավարութեան հետ, իսկ մենք, Ֆրանսիացիներս, վաղուց է արդէն որ անուններս կոտրեցինք Եւրոպայի աչքում, վաղուց է արդէն որ Եւրոպան նայում է մեր կառավարութեան վրա, որպէս մի անհայտառ, ժամանակաւոր կառավարութեան վրա, որը բացի սրանից յարգ ու պատիւ է կորցրել Եւրոպայի աչքում... Եւ ճշմարիտ, ոչ ոք դեռ չէ մոռացել Գրէվիի և Վիլսոնի ժամանակները և նրանց կառավարութեան օրով կատարված խայտառակ գործերը... Իսկ հիմա միթէ Եւրոպան հաւատարի է որ ներկայ կառավարութիւնը տոնական է... Տեսնում էք ինչ է կատարվում, տեսնում էք թէ Բուլախ-ժեանները ինչ խտրութիւններ են լարում ներկայ կառավարութեան դէմ, տեսնում էք ինչ խայտա-

նի խառատներ, հազուադէպ կարողներ: Միւսները խառնաբաշտ կոշկակարներ, երկաթագործեր, ներկարարներ: Ղարաբաղցիները նուիրված են թղթախաղին, աւելորդ ըէֆերին...:

Գործակատարները, որոնք տեղական հայերի երկրաստորութիւնը, թարմ դժն են կազմում, ապրում են շատ անգոյն և աննպատակ կեանքով, շատ չափաւ են, խաղում են թուղթ, իրանց աստացածը բոլորը ծախսում են, թէ 50, թէ 60 և թէ 100 րուբլի ստացողները մինչև անգամ պարտքի մէջ են խրվում... Մրանք չեն հետաքրքրվում ոչ մի հարցով, լինի նա ընկերական, լինի հասարակական: Մտաւոր սկզբունք ասած բանը նրանց համար գոյութիւն չունի, թէև չափաւոր միջնակարգ դպրոցներում կրթված մարդիկ են... Իրար պատահելիս տանը թուղթ են խաղում, կամ խօսում են ըէֆերի մասին: Այդ բոլորը, ի հարկէ, շատ ցաւալի տպաւորութիւն է թողնում զիտողի վրա:

Վ.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՅՑ

Օգոստոսի 19-ին

Մի շարաթ է, ինչ որ Ղուսարում վախճանվել է Բագուի նաւթային վաճառականութեան մէջ իր հեռաւտեսութեամբ յայտնի գերմանացի Լիւլ Մարտինովիչ ղը-Բուր: Նաւթագործարանատէրեր այս անտանիկ ճգնաժամում նրա մահը մի անհուսալ կորուստ պէտք է համարել: Քառորդ դարուց աւելի լինելով նրա Բագուի նաւթային առեորով պարագայը՝ նա այդ քառորդ դարում այնպիսի օգտաւէտ օրինակ է եղել Բագուի նաւթագործարանատէրերի և նաւթահորատէրերի համար, որ այժմ նրա օրինակներից անթիւ օգտվողները կատարելաւ ուղիւստ են: Հանդուցեալը առանց բացառութեան ամեն իրան զիտողներին, ինչ ազգից էլ լինէին նրանք, իր օգնութիւնը հասցրել է Նա որպէս մի մարդասէր մարդ օտի է կանգնեցրել, բաւի ընդարձակ նշանակութեամբ, այն անթիւ նաւթային և բարոյագէտ ընկած վաճառականներին, որոնց պատկառելի թիւը այսօր բաց է ի բաց աչքի է ընկնում: Նա յօգուտ ընդհանուր նաւթային-վաճառականութեան, այնպիսի ծանր հարցերի է պաշտպան կանգնել իր քաջութեամբ, որոնք թիւ չունեն Եւ վերջապէս նա աղքատ գրպանով Բագու գալով, կարողացել է իր վաճառականական բարձր տաղանդով ձեռք բերել ահազին կարողութիւն, այնպէս որ այսօր միլիոններ է դիզել թէ իր ահազին ընտանիքի համար և թէ իր հիմնարկած «Каспийск. ТОВАРИЩЕСТВО»-ի օգտին, որի մաս ունեցողները

առկ գործերի մէջ հրապարակապէս մեղադրում են իրար մեր բոլոր քաղաքական կուսակցութիւնները, տեսնում էք թէ Փրանսիական զօրքի գնդապետ, «Էլալ» անուանված թնդանութիւնի գործարանի կառավարիչը, ինչ տեսակ յանդուգն նամակ է տպել այս օրերս Պարիզի բոլոր լրագիրներում, սպառնալով որ եթէ բաւականութիւն չը տրվի գործարանի բանտներին, այդ գործարանի 800 բանտները խմբովին կերթան ցուցահանդէսը և կը քանդեն ցուցահանդիսի բոլոր յինութիւնները... Եւ այդ անում ենք մենք նոյն իսկ այն օրպէն, երբ ինքներս հրաւիրում ենք օտարներին այցելելու ցուցահանդէսը... Եւ դուք ինչ գիտե՛ք թէ ինչ է սպասում մեզ մի քանի ամսից յետոյ... Մենք ինչպէս կարող ենք մտածել, հոգալ ուրիշ ազգերի վրա, երբ ինքներս չը գիտենք, թէ ինչ վիճակի է սպասում մեր սեփական երկրից... Երբ դուք արդէն վերադարձած եք ինչեք ձեր հայրենիքը, հոկտեմբեր ամսին, երբ պարլամենտի ընտրութիւնները վերջացած կը լինեն, ամենք ինքներս չը գիտենք թէ ինչ ձեռք կառավարութիւն կ'ունենանք: Դանապետութիւն, թէ միապետութիւն... Ա՜հ որքան անորոշ է մեր զըրութիւնը մեր սեփական անհաստատամտութեան, մեր անբարոյական բնաւորութեան պատճառով... Ա՜հ երբ, ինչպէս, ինչ յարգանք կարող է վայելել մի հանրապետութիւն, որի օտակի և դեռ ևս չը մոռացված անցեալը, կրկնում են, արատաւորված է այնպիսի արարներով, ինչպէս Գրէվիի կառավարութեան օրով Վիլսոնի և նրա բանդայի կաղմակերպված աւազակային ամբողջ սխտեմը... Այո, Եւրոպայի աչքում աւելի յարգանք վայելելու համար մեզ, Փրանսիացիներս, հարկաւոր է փոքր ինչ աւելի բարոյական և ուղիւստ և փոքր ինչ աւելի ազնւութիւն... Եւ վերջապէս դա ինչ անապատութիւն է՝ միացնել ցուցահանդէսի բա-

բացառապէս հայերն են: Գիւռ շատ ժամանակ չէ անցել այն օրից, երբ ազգիս Հայրապետ բարեհաճել էր Բալթիանա այցելել նաւթի շատրու-լանները տեսնելու. հանգուցեալ Լիւլ Մարտինովիչը իր ազատ ցանկութեամբ որոնց՝ որքան ժամանակ վեհապետը Բալթիանում որ մնայ և իր հիմնած «Է. Տ.» ընկերութեան շատրուանը այդ միջոցին՝ որքան նաւթ արտադրէ, այդ նաւթի արժէքը ա. Էլմիաճնի վանքի վերաշինութեանը է նուիրում, որ և նաւթը վաճառելով ուղիղ 1.000 րուբլի նուիրաբերեց վեհապետին...:

Եւ որպէս ապացոյց նրա մարդասէր բարեսիրտութեան, այսօր Բագուի բազմաթիւ ֆիրմաներից և մասնաւոր անձերից պէտք է նրա դագաղի վրա (որը փոխադրված է տեղա), 30-ից աւելի զանազան թանգազին և փառաւոր պսակներ դրվին:

Գ. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Ոչ մի ժամանակ այդքան շատ չէին խօսում հայերի մասին եւրոպական մամուլի մէջ, որքան այժմ: Ոչ թէ միայն քաղաքական յօդուածներ են գրվում հայերի մասին, ոչ թէ միայն անթիւ հեռագիրներ են տպվում այլ և այլ մանաւանդ անգլիական լրագիրներում թիւրքաց Հայաստանի վիճակի մասին, բայց և նոյն իսկ հայերի կեանքը ազգագրական տեսակէտից ուսումնասիրող բազմաթիւ յօդուածներ ենք հանդիպում այս օրպէս թէ անգլիական, թէ ֆրանսիական և թէ գերմանական մամուլի մէջ: Գերմանական «Vossische Zeitung» լրագիրը տպագրում է այժմ մի շարք ճանտպարտորական նամակներ կուկլապիս: Այդ նամակների մէջ, որ արտատպում է և «Frankfurter Zeitung», ի միջի այլոց խօսվում է և հայ կանանց մասին: Հանապարտօրը նըւկարագրում է գիւղացի հայ կանանց նկարագրական գլխատը, նրանց ընտանեկան կեանքը, հայ ընտանիքի բարք ու վարքը, հայ աղջկայ ազատութիւնը մինչև որ նա պատկված չէ և ապա երբ նա ամուսնանում է, նրա ստրկային գրութիւնն ու տղամարդկանց հետ խօսելու արգելքը... Ապա ճանապարտօրը նկատում է որ, առհասարակ, ինչպէս բոլոր հարաւային երկրներում, հայ կինը շատ մաքրասէր չէ: Նկարագրելով հայ աղջկայ հրաշալի գիւղեցիկութիւնը, ճանապարտօրը աւելացնում է որ հայ ամբոխի մարդը միշտ աշխատում է իր համար նշանած ընտրել ամենագեղեցիկ կանանց միջից, իսկ տեղի գեղջկուհին, որքան էլ փող ունենալ, շատ դժուարութեամբ է իր համար մարդացու գտնում: Այդպիսով հայ ամբոխի մարդը միշտ աշխատելով գեղեցիկ, լաւ

ցումը մեծ յեղափոխութեան հարկաւանակի տօնախմբութեան հետ. ես ինքս սրտով հանրապետական եմ և ուրիշներից պակաս չեմ յարգում մեծ յեղափոխութեան անմահ սկզբունքները, բայց չեմ կարող չը համարել համ յանդուգն, համ միամիտ վարմունք մեր կառավարութեան կողմից, աւել Եւրոպային, եկէք մեզ հետ միասին տօնեցէք մեր մեծ յեղափոխութեան սկզբունքները, որոնք ձեզ այնքան ատելի են, որոնք ձեռք սրտերում միշտ ահ ու սարսափ էին զգում, միշտ յուզել են և շարունակում են միշտ յուզել ձեռք տօնելը... Այո, կարելի էր տօնել 1789 թվի յեղափոխական սկզբունքները՝ կամ ցուցահանդէսից մի տարի առաջ, կամ ցուցահանդէսից մի տարի յետոյ, և ոչ թէ միացնել այդ սկզբունքներին, որոնք ցուցահանդէսի, այսինքն համալսարանի արդիւնագործութեան խաղաղ տօնախմբութեան հետ... Գրանից աւելի անտակտ Եւրոպայի ամբողջ աշխարհը՝ գալ մասնակցել ցուցահանդէսին, համ էլ չարտել նոյն աշխարհի երեսին ամենամեծ վիրաւորանք եկէք, տօնեցէք այն, ինչ որ ձեզ համար ամենից ատելի է, այսինքն Փրանսիական մեծ յեղափոխութեան սկզբունքները, այդ ամեն բան քանդող, տակն ու վրա անող սկզբունքները...:

Այս տեսակ խիստ ճնշադատական, ինքնաքննող ուղղութեան են հասել այժմ Փրանսիական ամենաշնչաւոր մտածողները:

Այդքան բաւական է հայ ընթերցողին մի գաղափար տալու համար Փրանսիական այժմեան հասարակաց կարծիքի մասին...:

Գրիգոր Արծրունի

ԼԸ շարունակվում է. Լիվերպուլի նաւակառույցներում բանւորները իրանց աշխատանքները վերականգնեցին, որովհետեւ տէրերը համաձայնեցին լիովին տալ բանւորներին պահանջներին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 օգոստոսի Այսօր Կովկաս ուղևորվեց զինւորական միւստրը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 օգոստոսի: Երբ վերջացաւ այն եկեղեցւոյ օծումը, որը շինվել է թագաւորական «գնացքի խորտակման տեղը, ս. Իննգի օրեր-պրօպոստոսը և հաղորդակցութեան ճանապարհների միւստրը բաղդ ունեցան Բօրի կայարանից Նոցա կայսերական Մեծութիւններին հեռագիր ուղարկելու, որին նոյն օրը Ֆրիդլէնբորգից հետեւալ ուղղմամբ պատասխանը տրվեցաւ. «Սրտանց հնոհակալ եւ ձեզանց հեռագրի համար: Մենք բաղդաւոր ենք իմանալով որ արդէն պատրաստ է և օծված Մեր փրկութեան տեղում կանգնեցրած տաճարը: Ամենից շատ շնորհակալ ենք, Ալէքսանդր:» Ֆրիդլէնբորգում հիւր է նոյնպէս և Գերմանիայի այլի կայսրուհի Վիկտորիան իր աղջիկ Սօֆիային հետ, որը յունաց թագաւորուհի հարսնացուն է. իսկ Քրիստիան թագաւորի ծննդեան տօնի օրը պէտք է դան Շվեդիայի թագաւորը թագաւորանք իշխանի հետ միասին: Այդ տօնախմբութեանը ներկայ կը լինեն ընդամենը 30 օգոստոսի: Երկրորդ թիւը լէտէնի նալույ, Մեծ իշխանուհի Մարիա Պաւլովնայի հիւանդութեան ընթացքը բոլորովին գոհացուցիչ է. հիւանդի ոյժը վերականգնվում է:

Պետերբուրգում գտնվող Մեծ իշխաններ Ալէքսի և Սերգի Ալէքսանդրովիչները, վերջինը իր Ամուսնու հետ, երէկ երկուցեան Մոսկւա ուղևորվեցան: «ГРАЖДАНИНЪ» լրագիրը հաղորդում է, որ Ֆիւնանների միւստրութեան մէջ մի անանձին խորհուրդ է կազմված, ընկնելու այն միջոցները, որոնցով կարելի է զարգացնել ծխախոտի արդիւնաբերութիւնը, և հեռացնելու այդ գործում նկատված անկանոնութիւնները: Խորհրդի նախագիծը ճշդելու համար ուղարկվում է մի պաշտօնեայ Լէհաստան և հիւսիս-արևմտեան և հարաւարեւմտեան նահանգները:

ՊԱՐԻՋ, 24 օգոստոսի: Դատարանը դատարարեց բուլանժիան «Cocarde» լրագրի գլխավոր խմբագիր Մերմէյկսին չորս ամսվայ բանտարկութեան և 500 ֆրանկ տուգանքի այն պատճառով, որ նա մասնակցեց է եղել բարձրագոյն ատենանի թղթերը գողանալու մէջ, որոնց այդ լրագիրը հրատարակել է, նախ քան Բուլանժէի, Գիլիօնի և Բօշֆօրի գործի ընդունելու: «Temps» լրագիրը հաղորդում է, որ ներքին գործերի միւստրը հրաւեր է կարգադրել «պրիմիտիւններին Բուլանժէից, Բօշֆօրից և Գիլիօնից ոչինչ յայտարարութիւն չընդունել այն մասին, որ նրանք թեկնածու են առաջիկայ պարլամենտական ընտրութիւնների համար, ըստ որում այդ անձինք օրինապէս զրկված են քաղաքացիական իրաւունքներից և այդ պատճառով չեն կարող համապատասխանել օրէնքի այն պահանջներին, որոնք վերաբերում են շատ անգամ թեկնածու լինելու հարցին:

ՎԻԵՆՆԱ, 25 օգոստոսի: Այստեղի դիպլոմատիական շրջաններում խօսում են այն պատեւազմական պատրաստութիւնների մասին, որը շարունակում է անենել Կօթուրդեան իշխանը, անյայտ նպատակով:

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ, 25 օգոստոսի: Թագաւորանք Յենարիվիչ ուղևորվում է դէպի Հանսլէր, զօրահանգէսներին ներկայ գտնվելու համար, որտեղից Նորին Բարձրութիւնը կը վերադառնայ Ֆրէդէնսբորգ:

ԼՕՆԴՈՆ, 25 օգոստոսի: Նաւամատուցների տէրերը համաձայնութիւն կապած լինելով գործադուլ արած բանւորների հետ, այսօր աշխատանքները նորից սկսվել են մի քանի նաւամատուցներում. ի միջի այլոց և Բէտլէրի նաւամատուցում, որտեղ զինվել էր 10 միլիօն ֆունտ թէյի:

ՊԵԿԻՆ, 25 օգոստոսի: «Բէյտէրի գործակալութիւնը» հրատարակել է կայսերական հրաման, որի զօրութեամբ թուլատրվում է Պէկինի և Հանկաուի մէջ երկաթուղու գծի կառուցումը: Արդէն հրամայված է ձեռնամուխ լինել աշխատանքներին:

Խմբագիր - հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԻՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ, որ վարժապետութեան իրաւունք ունի, ցանկանում է ուսաց լեզուի և այլ առարկաների դասեր ունենալ հայոց դպրոցներում: Ցանկացողները կարող են դիմել—Ախալքալ, Յովհաննէս Մալխասեանց:

ԲՅՇԿԱՊԵՏ ԳԻՐԳՈՐ ՏԵՐ-ՄԿՐՁԵԱՆ ՏԵՐ-ԳԻՐԳՈՐԵԱՆՑ (ԹԻՖԼԻՍԵՑԻ)
Ցեղափոխվելով նոր բնակարան (Սապէրնայա փողոց, տուն Ալգադանովի № 7): Սեպտեմբերի 1-ից կընդունի հիւանդները:

ՀԱՂՈՒԵԿՁԻԹ

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի

ց1-ն (Օգոստոսի 1889

Պ Ա Հ Ա Ն Ջ Ք	Թիֆլիսում	Բագուի բաժն.	Ընդամենը	Պ Ա Ր Տ Ք	Թիֆլիսում	Բագուի բաժն.	Ընդամենը
1. Դրամարկ (առձեռն թղթադրամ).....	55,377—	114,883—96	170,260—96	1. Հիմնական դրամադրուս.....	1,000,000 —	— — —	1,000,000 —
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկ. բաժնում.	739—49	220,000 —	220,739—49	2. Պահեստի դրամադրուս.....	165,571—28	— — —	165,571—28
3. Զեղչումն (Disconto) մուրհակաց երկու ստորագրութեամբ.....	2,473,645—72	879,477—73	3,353,123—45	3. Դրամական աւանդներ՝			
4. Զեղչումն մուրհակաց մէկ ստորագրութեամբ, ապահոված պարանքներով.....	— — —	— — —	— — —	ա) Պայմանաւորում.....	1,745,047 —	109,467 —	1,854,514 —
5. Զեղչումն տոկոսաբեր թղթ., կտրօն. և այլն.	38,740—09	5,961 —	44,701—09	բ) Գահանջ.....	195,580 —	25,730 —	221,310 —
6. Փոխաւորութիւն դրամականով				գ) Ընթացիկ հաշիւով հասարակ.....	725,492—08	510,288 —	1,235,780—08
ա) Պետութիւնից ապահ. տոկոսաբ. թղթերի.	1,016,011—62	286,828 —	1,302,839—62	դ) — պայմանաւոր.....	— — —	194,965—79	194,965—79
բ) — ոչ ապահ. — — —	212,788 —	6,820 —	219,608 —	4. Զեղչումն մուրհակաց պետական բանկայի թիֆլիսի բաժնում.....	341,741—25	— — —	341,741—25
գ) ապրանքների.....	58,399 —	34,780 —	93,179 —	5. Մասնաւոր ընթացիկ հաշիւ պետական բանկայի թիֆլիսի բաժնում, ապահոված մուրհակներով և տոկոսաբեր թղթերով.	224,500 —	— — —	224,500 —
դ) Ոսկոյ և արծաթի.....	— — —	500 —	500 —	6. Թղթակիցներ՝			
7. Բանկի պատկանեալ տոկոսաբեր թղթեր.	369,705—36	28,857—27	398,562—63	ա) Նոցա հաշիւը (Loro).....	4,313,594—59	— — —	4,313,594—59
8. Ոսկի և արտասահմանի փոխանակադրեր.,	30,068—64	— — —	30,068—64	բ) Բանկայի հաշիւը (Nostro).....	4,644,973—11	— — —	4,644,973—11
9. Թղթակիցներ՝				7. Բաժնի հաշիւը կենտրոն. վարչութ. հետ. .	— — —	726,865—68	726,865—68
ա) Նոցա հաշիւը (Loro).....	4,249,697—08	— — —	4,249,697—08	կենտրոն. վարչութ. հաշիւը բաժնի հետ..	50,899—11	— — —	50,899—11
բ) Բանկայի հաշիւը (Nostro).....	4,420,067—76	— — —	4,420,067—76	8. Բանկայի բաժնետոմսերու անվճար կտրօնների բաշխը 82, 83, 84, 85, 86, 87, 88 թ.	3,493—10	— — —	3,493—10
10. Բաժնի հաշիւը կենտրոն. վարչութեան հետ. կենտրոն. վարչութեան հաշիւը բաժնի հետ.	655,550—71	— — —	655,550—71	9. Չը վճարուած տոկոսներ, աւանդներու, ընթացիկ հաշիւներու և այլ գործողութեանց.....	62,184—94	12,940—68	75,125—62
11. Բողոքուած մուրհակներ.....	6,021—41	— — —	6,021—41	10. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ.....	147,567—82	82,432—76	230,000—58
12. Պայմանաւորում անյուղուած փոխաւորութիւններ.....	9,600 —	2,270 —	11,870 —	11. Փոխանցիկ դումարներ.....	18,652—14	8,990—04	27,642—18
13. Ընթացիկ ծախսեր.....	27,962—54	9,299—85	37,262—39	12. Արդիւնք.....	— — —	— — —	— — —
14. Կահարապիւր և սկզբնական ծախսեր.....	3,215—36	2,520—39	5,735—75				
15. Յետ ստացուելիք ծախսեր.....	11,706—64	1,422—34	13,128—98				
Բ. Ա.	13,639,296—42	1,671,679—95	15,310,976—37	Բ. Ա.	13,639,296—42	1,671,679—95	15,310,976—37